Հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի (այսուհետ՝ համակարգող) թափուր տեղն զբաղեցնելու համար

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) վարչատնտեսական համակարգողի նշանակման կարգի համաձայն՝ **« ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի** համակարգողի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար ընդունվում են հայտեր 2026 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 18-ը ներառյալ:

2. Հաստատության համակարգողի պաշտոնն զբաղեցնելու համար հայտ ներկայացնելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

2) բարձրագույն կրթությունը:

3) աշխատանքային ստաժը («Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան):

3. Թափուր տեղը համալրելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ (Ձև 2-ին համապատասխան)

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթը (դիպլոմը).

4) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան՝ աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

5) ինքնակենսագրություն:

4. Փաստաթղթերի բնօրինակները լիազոր մարմնին պետք է ներկայացնել հարցազրույցի օրը:

Փաստաթղթերի բնօրինակներն ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում (հասցե՝**ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7,** տեղեկատու հեռախոս՝ 060-65-06-25, 098-44-40-98,): Հարցազրույցի անցկացման օրվա և ժամի մասին հավակնորդները կտեղեկացվեն անձնական էլեկտրոնային փոստով կամ հեռախոսազանգով: